Հաստատված է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի 2018թ. հունվարի 19-ի թիվ 4 նիստում
գիտական խորհրդի նախագահ՝

_____ Ռուբեն Միրզախանյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ <<ՇԱԽՄԱՏ>> ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

I Ընդհանուր դրույթներ

1. «Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) Շախմատ գիտահետազոտական ինստիտուտը (այսուհետ՝ ինստիտուտ) ստեղծվել է համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14 թիվ 1606-Ն որոշման, ՀՊՄՀ-ի կանոնադրության, Համալսարանի գիտական խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 3-Լ որոշման, Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում:

2. Ինստիտուտի հիմնադիրն է Համալսարանը:

3. Ինստիտուտը չունի իրավաբանական անձի կարգավիճակ և Համալսարանի անունից լիազորված է իրականացնելու գործունեություն՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության և այլ իրավասու մարմինների ընդունած իրավական ակտերով, Համալսարանի գիտական խորհրդի որոշումներով, ռեկտորի հրամաններով և սույն կանոնադրությամբ:

4. Ինստիտուտի կանոնադրությունը հաստատվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ և գործողության մեջ է դրվում ՀՊՄՀ ռեկտորի կողմից վավերացվելուց հետո:

5. Ինստիտուտի անվանումն է՝

- հայերեն լրիվ՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի <<Շախմատ>> գիտահետազոտական ինստիտուտ. հայերեն կարճ՝ ՀՊՄՀ ՇԳԻ՝

- ռուսերեն լրիվ՝ Научно-исследовательский институт ‘‘Шахматы’’ Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна”. ռուսերեն կարճ՝ ШНИИ АГПУ,

անգլերեն լրիվ՝ ‘‘Chess’’ Scientific-research institute of Armenian state pedagogical university named after Khachatur Abovyan անգլերեն կարճ՝ CHSRI ASPU.

6. Ինստիտուտի հասցեն է ՀՀ, ք. Երևան, 0010 Տիգրան Մեծի 17:

II. Ինստիտուտի գործունեության նպատակը ու խնդիրները.

7. **Ինստիտուտի գործունեության նպատակն է**. Բացահայտել շախմատի բազմագործառութային ներուժը և դրա իրացման հնարավորությունները 21–րդ դարի կոմպետենցիաների համատեքստում:

8. Ինստիտուտի գիտահետազոտական և նախագծային գործունեության հիմնական խնդիրներն են՝

ա. մշակել և ներդնել շախմատի հանրային նշանակության հետազոտման գիտականորեն հիմնավորված գործիքակազմ,

բ. ուսումնասիրել և բացահայտել շախմատի ազդեցությունը միջանձնային, ներանձնային, իմացական կոմպետենցիաների ոլորտներում,

գ. բացահայտել շախմատի ստեղծագործական, իմացական, հուզակամային, սոցիալական, առողջապահպան ներուժի և անձի զարգացման կապը,

դ. մշակել նորագույն տեխնոլոգիաներ ու մեթոդներ թիրախային տարբեր խմբերում շախմատ առարկայի արդյունավետ դասավանդման համար,

ե. մշակել, նախագծել, ներդնել և գործարկել կրթական համակարգում շախմատ առարկայի ուսուցման որակի գնահատման և շարունակական բարելավման գիտականորեն հիմնավորված համակարգ,

զ. Համագործակցել տեղական և միջազգային գիտակրթական և հետազոտական կառույցների հետ,

է. Շախմատի ոլորտում կատարված հետազոտության արդյունքները տարածել և հրապարակայնացնել տեղական և միջազգային տարբեր հարթակներում:

III Ինստիտուտի իրավունքները

9. Իր առջև դրված խնդիրներին համապատասխան ինստիտուտն իրավասու է.

9.1. Համալսարանի գիտական խորհրդին առաջարկներ ներկայացնել ինստիտուտի կառուցվածքի և կառավարման համակարգի փոփոխման մասին, ինչպես նաև ինստիտուտի կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,

9.2. գիտական գործունեության ասպարեզում ակնառու նվաճումների համար թեկնածուներ ներկայացնել Համալսարանի գիտխորհրդին՝ Համալսարանի պատվավոր կոչումների, մրցանակների, հուշամեդալների և խրախուսանքի այլ միջոցներ կիրառելու համար,

10. Համալսարանի կանոնադրությամբ վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացնել ձեռնարկատիրական գործունեության.

11. Ինստիտուտի գործունեության ընթացքում ստացված եկամուտները օգտագործվում են սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

IV. Ինստիտուտի կառավարումը

12. Ինստիտուտի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնադրությանը համապատասխան:

13.Ինստիտուտի անմիջական կառավարման մարմինը ինստիտուտի գիտական խորհուրդն է.

14.Ինստիտուտի գիտական խորհուրդը ինստիտուտի տնօրենի նախագահությամբ գործող գիտատեխնիկական գործունեությունը համակարգող կառավարման մարմին է: Խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն տարեկան երկու անգամ:

15. Ինստիտուտի գիտական խորհուրդը քննարկում է՝

- շախմատ առարկայի դասավանդմանն առնչվող գիտական աշխատանքների կատարման հայտեր, ընթացիկ, տարեկան և ամփոփիչ հաշվետվություններ,

- շախմատ առարկայի դասավանդման նոր լուծումներ, դրանց հուսալիությունը բարձրացնող նոր տեխնոլոգիաների մշակումներ,

-դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների թեմաների անվանումներ, դրանց կատարման ընթացքի հաշվետվություններ և ավարտված ատենախոսական աշխատանքներ,

- ինստիտուտի զարգացմանը նպաստող ծրագրեր և դրանց ներկայացում Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը,

- միջազգային համագործակցության ծրագրեր,

- առաջարկություններ ինստիտուտի կազմը մրցույթային կարգով համալրելու վերաբերյալ,

- սույն կանոնադրությունից բխող գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ:

16. Գիտական խորհրդի անդամների թվաքանակը չի կարող գերազանցել 15-ը և պակաս լինել 11-ից: Գիտական խորհրդի խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում է ինստիտուտի տնօրենը և Համալսարանի ուսումնա-գիտական հարցերով պրոռեկտորը: Խորհրդի կազմը համալրվում է ինստիտուտի տնօրենի կողմից առաջադրված և Համալսարանի ռեկտորի հավանությանը արժանացած Համալսարանի աշխատակիցներով, ինչպես նաև շախմատի, կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի բնագավառների հայտնի մասնագետներով: Խորհրդի նախագահի առաջարկությամբ նշանակվում է նախագահի տեղակալ և գիտական քարտուղար:

17. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր նրա անդամների 2/3-ի մասնակցության դեպքում: Խորհրդի որոշումները ընդունվում են խորհրդի նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Տնօրենի և խորհրդի միջև տարաձայնություններ առաջանալու դեպքում հարցը տեղափոխվում է Համալսարանի գիտական խորհուրդ: Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նախագահի պարտականությունները կատարում է նախագահի տեղակալը:

18. Ինստիտուտի տնօրենը նշանակվում է Համալսարանի ռեկտորի հրամանով և ի պաշտոնե հանդիսանում է Ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ:

18.1. Տնորենը՝

ա/ կազմակերպում է ինստիտուտի գործունեությունը և օրենսդրությամբ սահմանված կարգով կրում պատասխանատվություն, գործում է ինստիտուտի անունից, ներկայացնում է դրա շահերը,

բ/ իր իրավասության շրջանակներում ապահովում է Համալսարանի և ինստիտուտի կառավարման մարմինների որոշումների կատարումը,

- կազմակերպում է ինստիտուտի աշխատանքը,

- հրավիրում է ինստիտուտի գիտական խորհրդի նիստեր,

- Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ինստիտուտի աշխատանքի տարեկան հաշվետվությունը,

V Ինստիտուտի կառուցվածքը

19. Ինստիտուտի կառուցվածքը սահմանվում է ինստիտուտի գիտական խորհրդի առաջարկությամբ՝ Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով: Կառուցվածքային ստորաբաժանումների կազմը, իրավասություններն ու պարտականությունները որոշվում են Համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

VI Ինստիտուտի գիտական գործընթացի կազմակերպումը

22. Ինստիտուտում գիտահետազոտական աշխատանքները կազմակերպվում են ՀՀ օրենսդրության, Համալսարանի կանոնադրության, սույն կանոնադրության և համապատասխան կանոնակարգերի համաձայն:

23. Ինստիտուտի գիտական գործունեությունը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից՝ պետական բյուջեից, պայմանագրերից գոյացած միջոցներից, դրամաշնորհներից, Համալսարանի արտաբյուջեից, հիմնադրամներից, ներառյալ

արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հատկացումները, քաղաքացիների ներդրումները և այլն:

24. Գիտահետազոտական աշխատանքներին կարող են մասնակցել ինստիտուտի աշխատակիցները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագրային հիմունքներով հրավիրված մասնագետները:

VII Ինստիտուտի գործունեության դադարեցումը

25. Ինստիոտուտի վերակառուցումն ու լուծարումը կատարվում է ՀՀ գործող օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ սահմանված